ՆՈՐ-ԴԱՐ

128 ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Հ֊ալաթ 17 Օգոստոսի | 1891 | Հ֊ալաթ 17 Օգոստոսի ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 128

Տարին 10 րուբլի, վից ամիսը 6 րուբլի, երեք ամիսը 3 ր. 50 կ
ամիսը 1 ր., Հատուկ 5 կոպեկ։
Բաժանորդ գրուում են Թիֆլիսում միայն խմբագրատանը։

Խմբագրութիւնն Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Дары»
или Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաւին 2 կ., բեկլամների համար կընդապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Հասարակաց կարծիքը մեզնում։
Քրոնիկոն.— Լուրեր Հայոց գործերի այժմեան վիճակը Թաւրիզում։ Ֆրանսիական ցուցահանդեսը Մոսկուայում։ Գրաքակութիւններ.—Շուչի։
Քաղաքական.—Քաղաքական լուրեր։
Խառն լուրեր։
Հեռագրեր։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՀԱՍԱՐԱԿԱՑ ԿԱՐԾԻՔԸ ՄԵԶՆՈՒՄ.

—

Հասարակաց կարծիքը, ընդհանուրի կարծիքն ամենամեծ դատաւորն է մի ժողովրդի, մի հասարակութեան մէջ. նրա դատաճը դատած է, ասածն՝ ասած։ Հասարակաց կարծիքի ձայնը է իբրև ճշմարտութեան ձայն։ Ասած է՝ ձայն բազմաց—ձայն Աստուծոյ։

Հասարակաց կարծիքով, նրա ազդեցութեան տակ կատարուած գործերն ու վճիռները կարող չեն սխալ լինել և վնասակար հետեւանքների տանել. քանի որ այդ հասարակական կարծիքի ձայնը ըղձում է նոյն իսկ ժողովրդի, հասարակութեան մէջից հասարակութեան ներքին աշխարհի արտայայտութիւնն է, ամբողջութեան, ընդհանրութեան մտածմունքն ու կամեցողութիւնն է։

Բախտաւոր են այն ժողովուրդները, որոնք ունին հասարակական կարծիք, որոնց մէջ կարող է ծնուել, առաջ գալ հասարակական կարծիքը, կարծիք, որ հասարակութեան մաքրող, ազնուացնող, գործօն ուժերից ամենամեծն է։ Բախտաւոր ու բարձր են այդպիսի ժողովուրդները։

Բայց արդեօք մեզնում, մեր կարծեցեալ հասարակութեան մէջ կայ և կարող է գոյութիւն ունենալ հասարակական կարծիք, մի կարծիք, որ խնդիրն արտայայտութիւն լինէր մեր ամբողջութեան, մեր ընդհանրութեան։

Մենք մեզ խաբում ենք, երբ կարծում ենք թէ այդպիսի կարծիք կայ մեզնում և կարող է գոյութիւն ունենալ։

Մեմք շփոթում և իրար տեղ ենք ընդունում հասարակաց, հասարակական կարծիքն և ամբոխի, ամբոխային կարծիքը։ Մեզնում կայ միայն վերջինը՝ ամբոխային կարծիքը, խաւար, անմիտ ամբոխային կարծիքը։

Քանի որ չկայ մեզնում հասարակութիւն, իսկական մտքով հասարակութիւն, չի կարող լինել և հասարակական կարծիք։ Մեզնում հասարակութիւնն անուան տակ կայ միայն խաւար ամբոխ, իբր չարն ու բարին չիմացող ամբոխ, կան և աշխարհից—գործից անտեղեակ Թմրող ու աճող Թաթոսներ ու Մաթոսներ, կան և երամական երիտասարդներ «Թայֆաներին» բաժանուած, որոնք խաւար ամբոխից քիչ տարբերութիւն ունին։ Մտածող, ինքուրոյն գործող մարդիկ, կենդանի անձնաւոր մարդիկ մեզնում քչերը կան, և այդ քչերը ցրիւ եկած մնում են իբրև մեր ապագայ կազմուելիք հասարակութեան անդամներ։ Իսկ հասարակական կարծիքը, այն կարծիքը, որի ձայնը հաւասար է աստուածային ձայնին, կարող է կազմուել միայն այդպիսի անհատներից, մտածող անդամներից բաղկացած հասարակութեան մէջ, երբ որ այդ կարծիքը հիմնուում է հասարակութեան, բազմութեան ամեն մի անհատի սեփական առողջ դատողութեան վրայ, երբ որ հասարակաց կարծիքի մէջ մասն ունի հասարակութեան, բազմութեան ամեն մի անդամի սեփական կարծիքը։

Բայց ո՞րն է մեր հասարակական կարծիքը, ինչի՞ վրայ է հիմնուում դա. արդեօք իրօք կենդանի մասնակցութիւն ունին մեր այդ «հասարակաց կարծիք» ասածի մէջ մեր «հասարակութեան» անդամները։

Այդ հարցերի պատասխանը տալը շատ հեշտ է, քանի որ միանգամ գիտենք թէ ինչ տարրերից է բաղկացած մեր «հասարակութիւնը»։ Մեր «հասարակութիւն» ասածը մեծ մասամբ բաղկանում է այնպիսի մարդկանցից, որոնք, սակաւ բացառութեամբ, հասարակական ոչ մի գործով չեն հետաքրքրուում, ոչ մի հասարակաց գործի չեն մասնակցում։ Այդպիսիները, հարկաւ, կարող չեն և հասարակութիւն կազմել և կարծիք ունենալ։ Մնում են երիտասարդները, և մեր հասարակութիւն ասածը մեծ մասամբ կազմուած են երիտասարդներից, իսկ թէ ինչպիսի յատկութիւն ունին, ինչ խելքի և սեփական դատողութեան տէր են մեր իբր հասարակական գործերով հետաքրքրուող երիտասարդները, մենք այդ տեսանք։ Տեսանք թէ ինչ ցաւալի, անմիտ երամականութիւն է իշխում մեր երիտասարդների մէջ։

Մի ժողովրդի մէջ, ուր հասարակութիւն ասածը՝ մեծ մասամբ երիտասարդները և նոյն իսկ ուսանողները, դաստան աշակերտներն են կազմում. մի ժողովրդի մէջ, ուր հասարակութիւն կազմող երիտասարդների մեծ մասը դեռ ամբոխային աստիճանի վրայ է, դեռ ևս երամականութեան մէջ է, —այդ ժողովրդի մէջ կարող չէ լինել և հասարակութիւն և հասարակաց կարծիք, այդտեղ կարող է լինել միայն դեռ ևս խաչաձեւ հասարակաց կարծիք, ամբոխային կարծիք։ Իսկ ամբոխային կարծիքի հետ ինչպէս ուզես, կարող ես խաղալ, ինչպէս ուզես՝ կարող ես շուռ տալ ամբոխի կարծիքը. որովհետև ամբոխը սեփական խելքով չի դատում։ Այսօր ամբոխին ասես՝ այս բանը սև է, կ'ասի՝ սև է, վաղն ասես՝ սպիտակ է, կասի՝ սպիտակ է։ Ամբոխը կարծիք չունի, մինչև որ առաջնորդները, «գաւառագիտուններ», «գիտոցիկներ» չունենայ. իսկ այդ «գաւառագիտուններին», «գիտոցիկներին» կարծիքն է և ամբոխի կարծիքը։

Ահա այդպէս է կազմուում և մեր «հասարակաց կարծիքը». և այդպէս կըկազմուի, քանի որ մեզնում մեր հասարակութիւն կազմող երիտասարդների մեծ մասի մէջ կ'իշխէ ամբոխի երամական յատկութիւն, քանի որ մեր երիտասարդները չեն ունենայ իրենց սեփական առողջ դատողութիւնը։ Մի քանի Օհաններ մեր «հասարակութեան» գլխին այնպէս ծանր կերպով նստել են, այնպէս կապել են մեր հասարակութեան ձեռն ու ոտը, որ չեն թողնում հասարակութիւնը իր կամքով շարժուի. նրանք հասարակութեան քթից բռնած, ինչպէս ուզում են, շարժում են։ Մեր հասարակութիւնը կամք չունի, նրա կամքը մի քանի Օհանների կամքն է։

Մի քանի Օհաններ, իբրև մեր երիտասարդութեան «գաւառագիտուններ ու գիտոցիկներ», ինչպէս ուզում են, խաղացնում են մեր «հասարակաց կարծիք» ասածը, և նոյն իսկ ի չարն են գործ դընում երամականների վրայ իրենց ունեցած այդ իշխանութիւնը։ Բնական է, որ Օհանը մի կարծիք յայտնեց, մեր երամականներն էլ նեղութիւն չեն կրում սեփական խելքով մտածելու Օհանի ասածի վրայ, կշռադատելու նրա ասածը, այլ՝ իբրև Օհանի հլու սպասաւորներ, բերան են անում Օհանի ասածները, գռնէ գուռ են ընկնում, ամեն տեղ մտնում գուրս են գալիս, փողոցները ման գալիս, ամեն տեղ ամեն պատահողի կրկնում են Օհանի ասածները, բղաւում, ճղաւում, աղմուկ են հանում,—և ահա՛ «հասարակաց կարծիքը» պատրաստ է. իսկ Օհանը հասաւ իւր նպատակին։

Այդպէս չի կազմուել ու կազմուում մեզնում մեր հասարակական կարծիք ասածը. հասարակական կարծիք, որ ոչնչով չի տարբերուում ամբոխային կարծիքից։

Բախտաւոր են այն ժողովուրդները, որոնց մէջ կայ հասարակութիւն, հասարակական կարծիք. իսկ մեզնում կայ միայն ամբոխային կարծիք. մեզնում կան միայն Օհաններ՝ «գաւառագիտուններ ու գիտոցիկներ», և դրանց կարծիքն է մեծ մասամբ և մեր «հասարակաց կարծիքը»։

Եթէ մեզնում լինէր հասարակաց կարծիք, անարժան մարդիկը, անարժան հասարակական գործիչները չէին կարող մի րոպէ անգամ գոյութիւն ունենալ. բայց քանի՜ այդպիսիները կան այս բոպէիս, որոնք, առանց հասարակաց կարծիքի պատիժն ու պատուհասը կրելու, դեռ ապրում են մեզնում և ապրում են պատիւներ ստանալով։ Եւ ինչո՞ւ չեն ապրիլ ու պատիւներ ստանալ, քանի որ այդ անարժան մարդիկը, այդ ստոր արարածները բարեկամ են միայն մի քանի Օհանների, իսկ Օհանների բարեկամը, մեր երիտասարդութեան երամականութեան պատճառով, կարող չէ հասարակաց խիստ դատաստանին ենթարկուել...

ՔՐՈՆԻԿՈՆ

Մեր ելոյի պատճառով «Նոր-Դար»-ի հետևեալ համարը լոյս կը տեսնի հինգշաբթի, օգոստոսի 22-ին։

—

Հայոց Թատրոնական մասնաժողովի առանձին յանձնաժողովը ներկայումս զբաղուած է նոր պիէսների քննութեամբ։ Բայլ Թարգմանական պիէսներից, յանձնաժողովին ներկայացրած են և մի քանի նոր ինքնուրոյն պիէսներ, ինչպէս են՝ «Տիգրանուհի», պատմական դրամա 5 արարուածով, հեղ. Լ. Մանուէլեանցի, «Ճոխութեան զոհեր», դրամա 4 արարուածով հեղ. Թաւարէզեանի և «Աղատամիտներ», դրամա 4 արարուածով հեղ. Նար-Դոսի։

—

Կենդանիներին ապահովող Թիֆլիսի ընկերութիւնն այս տարի աշնանը, տեղական թերթերի ասելով, մտադրութիւն ունի Կովկասի չատ քաղաքներում, ինչպէս, օրինակ, Վլադիկաւկազում, Բագուում, Երևանում և ուրիշ տեղերում, հոզաբարձութիւններ հիմնելու։

—

Նոյն թերթերին հաղորդում են որ Բորժոմում հայոց ուսումնարան է բացուում։

—

Վաղուց է, որ զգացւում է հայերէնից հայերէն մի այնպիսի բառարանի կարիք, որի մէջ մտած լինէին նոր բառերը, որ բաւականութիւն տար աշխարհաբար լեզուի համար։ Վենետիկեցոց «Առաջնոն» բառարանի մէջ մըտնում են միայն գրաբարի բառերը, որոնք գործ են ածուել մեր հին մատենագրութեան մէջ. բացի այդ, «Առաջնոն» բառարանը, գրաբարի ուսման համար նշանակուած լինելով, շատ քիչ օգտակար կարող է լինել աշխարհաբարի ուսումնասիրութեան համար, մանաւանդ այն մարդկանց ձեռքին, որոնք գրաբար չգիտեն։ Այժմ Կ. Պոլսում Նշան Էֆէնդի Պէրպէրեանի խմբագրութեամբ լոյս է տեսնում «Հայերէն լեզուի նոր բառգիրք», որ տպուի բաղկանայ 40 թերթերից, և առ այժմ հրատարակուել է մինչև 8-րդ թերթը։ Այդ նոր բառարանի մէջ պիտի բովանդակուեն 30,000 բառեր՝ ոճեր, նորաբանութիւններ, գաւառական, արհեստական, դիցաբանական և այլն բառեր։ Գրաբարի բառերից այդ բառարանի մէջ մտնում են ամենից գործածական բառեր ու ոճերը՝ ի հարկին իրենց նոր աստիճաններով ու համանշանակներով։ Կազմողն օգտուել է բացի ուրիշ հայերէն բառարաններից, գլխաւորապէս Նորայր Բիւզանդացու ֆրանսերէնից հայերէն ընդարձակ բառարանից, նոյնպէս և ուրիշ նոր հրատարակութիւններից. բացի այդ հեղինակն այդ բառարանի մէջ մտցրել է և ուրիշ բառարաններից դուրս գտնուած մի քանի հազար բառ։ Բառարանի մէջ նշանակուած են չատ բառերի արմատները ու նրանց ածանց և բարդ բառերը։

—

Բարձրագոյն հաւանութեամբ Ռուսաց Կայսերական Տեխնիքական Ընկերութիւնը 1892 թուին Պետերբուրգում համառուսական հրշէջային ցուցահանդէս է բանալու։ Յիշեալ ցուցահանդէսի մասնաժողովը ուղարկել է մեզ ցուցահանդէսի ծրագիրը, որից իմանում ենք, որ ցուցահանդէսի նպատակն է հասարակութեանը ծանօթացնել հրշէջային գործիների, կրակի դէմ կռուելու և հրդեհների ծագման դէմն առնելու միջոցների հետ։ Ցուցահանդէսը կը բացուի 1892 թուի ապրիլի կիսին և մի ամսից աւելի չի տեւիլ։ Ցուցահանդէսին մասնակցելու համար հրաւիրուած են գլխաւորապէս ռուս էքսպոնենտներ։ Օտարերկրեայ էքսպոնենտների մասնակցութիւնը թոյլ է տրուում, բայց նրանց ի ցոյց դրած առարկաները մրցութեան չեն ենթարկուում։ Ցուցահանդէսը պիտի բաղկանայ հետևեալ բաժիններից. 1) հրդեհների առաջն առնելու միջոցներ և եղանակներ, 2) հրդեհները յայտնի կացուցանելու և նրանց մասին տեղեկութիւն տալու համար գործիներ և միջոցներ, 3) հրդեհները հանգցնելու համար գործիներ, 4) հրշէջային գործիները և մարդկանց հրդեհի մօտ տեղափոխելու միջոցներ, 5) հրշէջների խմբերի կազմակերպութիւն, հրշէջների հագուստ և զործիներ, 7) վիճակագրութիւն և գրականութիւն։ Ցուցահանդէսի հետ միաժամանակ մասնաճիւղների համազումար է լինելու հրշէջային գործի մասին խնդիրներ քննելու համար։ Ցուցահանդէսի մասնաժողովը խոստանում է իւր ժամանակին տեղեկութիւններ հաղորդելու մեզ բացուելիք ցուցահանդէսի մասին։

—

Ստացանք «Հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութեան» հրատարակութեամբ լոյս տեսած Ց. Ց. Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները», երկրորդ տպագրութիւն։

—

Միջին-Ասիական ցուցահանդէսը փակուելու է հոկտեմբերի 1-ին, բայց մասնաժողովը մտադիր է խնդրատուոյց

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

— Ես ինձ համար ոչինչ չեմ ուզում, ես ուզում եմ միայն, որ ինձ հետ եղածները ազատ արձակեն։

— Ինչ ասել է ազատ արձակեն, ինչ ասել է ազատ արձակեն, — ասաց ոստիկանապետը, — ես ինքս ինձ համար ոչինչ չեմ ուզում, ես ուզում եմ միայն, որ ինձ հետ եղածները ազատ արձակեն։

— Ես

ՀԱՅՈՑ ՀԱՐՑԸ

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹԻՒՆ

Մ. ՔԱՍՈՒՆԻ

—

Նախքան ինչ-որ բան ասելը, ես պարտական եմ ընթերցողներուս ներողութիւն խնդրել, որ ես ստիպուած եմ անդրադառնալ հարցի մը, որ ինծի համար ալ, ինչպէս իրենց համար, ոչ միայն նոր է, այլ եւ ամենեւին ծանօթ չէ։ Ես ստիպուած եմ անդրադառնալ, որովհետեւ ինծի համար ալ, ինչպէս իրենց համար, ոչ միայն նոր է, այլ եւ ամենեւին ծանօթ չէ։ Ես ստիպուած եմ անդրադառնալ, որովհետեւ

Նախքան ինչ-որ բան ասելը, ես պարտական եմ ընթերցողներուս ներողութիւն խնդրել, որ ես ստիպուած եմ անդրադառնալ հարցի մը, որ ինծի համար ալ, ինչպէս իրենց համար, ոչ միայն նոր է, այլ եւ ամենեւին ծանօթ չէ։ Ես ստիպուած եմ անդրադառնալ, որովհետեւ

Նախքան ինչ-որ բան ասելը, ես պարտական եմ ընթերցողներուս ներողութիւն խնդրել, որ ես ստիպուած եմ անդրադառնալ հարցի մը, որ ինծի համար ալ, ինչպէս իրենց համար, ոչ միայն նոր է, այլ եւ ամենեւին ծանօթ չէ։ Ես ստիպուած եմ անդրադառնալ, որովհետեւ

Նախքան ինչ-որ բան ասելը, ես պարտական եմ ընթերցողներուս ներողութիւն խնդրել, որ ես ստիպուած եմ անդրադառնալ հարցի մը, որ ինծի համար ալ, ինչպէս իրենց համար, ոչ միայն նոր է, այլ եւ ամենեւին ծանօթ չէ։ Ես ստիպուած եմ անդրադառնալ, որովհետեւ

վերստ վերև Նան-Ցիկեանի վրայ, յարձակում գործեցին կաթոլիկների տաճարի վրայ։ Իւր ժամանակին մի խումբ զօրք անկարգութիւնների տեղը հասնելու չէր նորին չինացիները բաւականացան միայն Նրանով, որ այրեցին մի փոքրիկ տուն և ցրուեցին, զինուորների ձեռքում 17 հոգի թողնելով։ Հետեւեալ օրը Անցինում, Ան-Խոյ գաւառի գլխաւոր քաղաքում, սկսուած անկարգութիւններին հենց սկզբից վերջ տուից տեղական պրեֆեկտը. այդ անկարգութիւնները սկսուել Նրանով, որ չինացիներն իրենց միջից մարդիկ էին ընտրել և ուղարկել կաթոլիկ միսիոնարների տները, այնտեղ որոնելու իբր թէ միսիոնարների ձեռքով գողացուած չինացի երեխաների, բայց, ի հարկ է, ոչինչ չէին գտել։ Խէ-Ջօու և Ան-ցին քաղաքներում անաջողութեան հանդիպելով, ներկայ թագաւորական տոհմին հակառակ և ժողովրդական չարժման իսկական պարագլուխներ հանդիսացած «եղբայր-ծերերի ընկերութիւնը» փորձեց անկարգութիւններ առնել Նան-Ցիկեան գետի ներքին հոսանքի վրայ գտնուած քաղաքներում։ Այսպէս, Նանկինում ամբոխն այրեց աղջկանց ուսումնարանը և խաղաղեց միայն զօրքի չնորհիւ։ Բացի Նան Ցիկեան գետի վրայ գտնուած քաղաքներից, ուր ամբոխը բռնաբարութիւններ էր կատարում քրիստոնեաների վրայ, յիշել գաղտնի ընկերութիւնը չինական ուրիշ քաղաքներումն էլ պրոկլամացիաներ է տարածել, որոնցով ժողովուրդը բացարձակ ապստամբութեան է հրաւիրուած։ Գաւառներում իշխանութիւնը քաջալերում է զօրքերի թիւը՝ պահպանելու համար այն տեղերը, ուր անկարգութիւններ են եղել, յայտարարութիւններ է կպցնում, որոնց մէջ ժողովրդին յիշեցնում է, որ քրիստոնէական կրօնը միայն բարութիւն անել է ուսուցանում և, մեծ պատիժների երկիւղ տալով, արգելում է տարածել լուրեր, որոնք նպատակ ունին հասարակական կարգը խանգարելու։ Կեդրոնական կառավարութիւնն իւր կողմից տեղական իշխանութիւններին հրահանգներ է ուղարկել հրաժայելով, որ անկարգութիւնների տեղերը զօրքեր և պաշտօնեաներ ուղարկուեն բռնաբարութիւններ անողներին գտնելու և ձերբակալելու համար։

ԱՆԳԼԻԱ.—Ֆրանսիական նաւախմբի Սպիտհէդ այցելելու առթիւ «Morning Post» լրագիրը քննում է ցամաքային պետութիւնների միջև եղած ներկայ քաղաքական յարաբերութիւնների մասին խնդիրը և կարծիք է յայտնում, թէ «և նկատի ունենալով ներկայ քաղաքական դրութիւնը, Անգլիայի համար ամենից չանաչէն այն է, որ նա բոլորովին անկախ դրութեան մէջ մնայ։ Ներկայ պայմաններում հաւասարակշռութիւնը ցամաքի վրայ կախուած է Անգլիայի դրութիւնից, և այդ պարտաւորեցնում է նրան առանձնապէս զգոյշ լինել։ Անգլիան ամենևին չէ ցանկանում, որ իւր բարեկամութիւնը մի խումբ ցամաքային պետութիւնների հետ իրեն տարաձայնութեան մէջ ձգէ միւս խմբի հետ, և թէպէտ նա հաճակրում է եռապետական դաշնակցութեանը, որ խաղաղութիւնը պահպանելու համար է հաստատուած, բայց այդ դեռ չէ նշանակում, որ դրանով Անգլիան հաշտուի իրեն հակառակ տարաձայնութիւնների հետ։ Անգլիան սիրով դիմաւորեց գերմանական կայսրին նրա համար, որ Ռեվանիայի հետ բարեկամական կապեր ունի։ Նոյնը պէտք է ասել և իտալական թագաժառանգին ցոյց տուած լաւ ընդունելութեան մասին։ Բայց այդ բոլորը ամենևին չի վերաբերում այն սրտեռանդ ընդունելութեանը, որ ցոյց է տրուած ֆրանսիական նաւախմբին։ Ֆրանսիական նաւախմբի Անգլիա այցելութը յամենայն դէպս Անգլիայի և Ֆրանսիայի միջև փոխադարձ բարեկամական յարաբերութիւնների նշան կը լինէր, իսկ ներկայ պայմաններում այդ այցելութիւնը, բացի դրանից, Ֆրանսիայի խաղաղասիրական քաղաքականութեան նշան էլ է հանդիսանում»։ Անգլիական լրագիրների այսպիսի դատողութիւնների առթիւ «Vossiche Zeitung»-ը նկատում է, քանի որ Ֆրանսիան և Ռուսիան չեն խանգարում խաղաղութիւնը, Անգլիան «կարող է երկու կողմն էլ գլուխ տալ, ոչ մէկին դժգոհութիւն չպատճառելով»։ Բայց այդ ամենևին չէ ապահովեցնում եւրոպական հաւասարակշռութիւնը և ցամաքի վրայ ընդհարում լինելու դէպքում նա ճարահատեալ ստիպուած կը լինի այս կամ այն կողմը բռնել։

—

ԿԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—Լսում է, որ Իտալիան համաձայն է Անգլիայի և Ֆրանսիայի հետ բանագնացութեան մէջ մտնել միացած ուժերով Չինաստանում օտարերկրացիներին պահպանելու համար միջոցներ ձեռք առնելու վերաբերմամբ։

—Ֆրանսիական լրագիրները հաղորդում են, թէ գերմանական կառավարութիւնը 5 միլիոն մարկ է պահանջելու Հելգոլանդն ամրացնելու և Ելզաս-Լոթարինգիայում ու արևելեան Պրուսիայում զօրանոցներ կառուցելու համար։ Ընդ նմին լրացուցիչ փոխառութիւն կը պահանջուի մի քանի ռազմական երկաթուղիների վրայ երկրորդ գիծ անցկացնելու համար։

—Թուրք աւազակները Հերակլիայի մօտ երկու ֆրանսիացի ագարակատէրեր են փախցրել, որոնց համար 115,000 լիր վրկանք են պահանջում։ Ֆրանսիական դեսպան Մոնտեբելոն դիմել է Բ. Դրանը, պահանջելով, որ գերիներին ազատէ։

—Վէննայի լրագիրների ասելով, Սերբիայում խիստ հիւանդագուած են սերբիացոց թագաւորին Ռուսիայում ցոյց տուած ընդունելութիւնից։ Խնամակալ Ռիստիչը խիստ վիրաւորուած է, որ իրեն պատշաճաւոր յարգանք չեն ցոյց տուել։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Քրիստոսի Ննջեան Երեքշաբթի.—Սոյն օգոստոսին գերմանական Թրև քաղաքում ըստ աւանդական և պարբերական սովորութեան ի ցոյց պէտք է դրուեն մի նոր իրական վերարկու, որի համար ասում են, թէ Քրիստոսի վերջին վերարկուն է և որ մեծ խնամքով պահում է Թրևի եկեղեցում։ Այս առթիւ կաթոլիկ ժողովրդի մեծ ուխտագնացութիւն է լինում Թրևում։ Այս տարի Թրև գնալու պատրաստուող ուխտաւորների թիւը չորսից մինչև հինգ միլիոն են հաշւում Կաղովիցի մի գերմաներէն թերթ յիշեալ վերարկուի իսկականը լինելու մասին կասկած էր յայտնել, և այդ բանի համար խմբագիրը երկու չաբաթուայ բանտարկութեան դատապարտուեց։

Վիլորեիս Լափոնիս սիրահարը։—Լոնդոնում այս օրերս մի գործ էր քննւում ոմն Ալֆրէդ Կարտէրի մասին, որի վերայ մեղադրանք կար, թէ նա իրեն թոյլ էր տուել անհամեստ նամակներ գրելու անգլիական Վիկտորիա թագուհուն։ Այդ նամակների մէջ նա իւր սէրն էր յայտնում թագուհուն, խնդրում էր նրա ձեռքը և միևնոյն ժամանակ փող էր խնդրում, և սպառնալիքներ էր գրում, եթէ նա մերժէր իւր խնդիրքը։ Մեղադրեալը դատապարտուած բացագրեց, թէ մի անգամ Վինձորում հանդիպելով թագուհուն, իրեն թուաց, թէ թագուհին մի առանձին կերպով ժպտաց իւր դէմքին և հենց այդ հանգամանքն էլ խրախուսեց իրեն յիշեալ նամակները գրելու։ Բժիշկ Հկսպերտները գտան, որ Ալֆրէդ Կարտէրի խելքը տեղը չէ, ուստի և նա ազատուն ուղարկուեց։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ
ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 օգոստոսի.—

Այսօր Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչն Ամուսնու, որդոց և հետևորդների հետ արտասահման ուղևորուեց։ Նոցին բարձրութիւնները Բերլին են գնում, այնտեղից Հելմիզանդ կը գնան, որտեղ կ'այցելեն Մակլենբուրգ-Շվերինի մեծ հերցոգին. իսկ օգոստափառ որդիքը Պարիզ կը գնան, որտեղ կը սպասեն օգոստափառ ծնողներին։ Պարիզից նոցին բարձրութիւնները Սան. Սեբաստիան կը գնան ծովում լողանալու համար։

ԼՈՆԴՈՆ.—Չիլիում միջազգային պատերազմի համար մի այսպիսի րոպէ է հասել. պատերազմող զօրքերից ոչ մէկը մտադիր չէ յարձակում սկսելու։ Այսօր ամբողջ օրը երկուստեք թեթև հրացանաձգութիւն էր շարունակւում. հաւանական է, որ ապստամբները փոխեն իրենց գործելու ծրագիրը և երկրի ներսը գնան, որպէս զի աւելի շահաւէտ դիրք բռնեն, որ թոյլ տար յարձակման ուղղելու ուղղակի մայրաքաղաքի դէմ, առանց միորև է առանձին և իսկ անելու։ Ընդհարումն կը լինի այս օրերս, կարծում են, որ հասարակապետութեան նախագահ Բոլմասեդանփորձ կ'անի կտրելու ապստամբների ետ նահանջելն և յարձակողական շարժում կը սկսէ։

Պատասխանատու խմբ. Մ. ԱՐԵՂԵԱՆ
Հրատարակիչ՝ Ս. ՍԱՂԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
I Անդրկովկասեան երկաթուղի
Գնացք թիֆլիս-կարս է
Բաթումից, պոստ. 11 ժ. 8 ր. եր.
Բագուից, « 7 ժ. 40 ր. առ.
Բաթումից, մար. ապ. 8 ժ. — ր. առ.
Գանձակից, » 8 ժ. 20 ր. րո
Գնացք Թիֆլիսից Փոթ է
Բաթում, պոստային. 8 ժ. 40 ր. առ.
Բագու, » 12 ժ. 8 ր. գիշ.
Բաթում, մար. ապ. գն. 3 ժ. 10 ր. ց.
Գանձակ, « . ժ 45 ր. առ.
II Անդրկասպեան երկաթուղի
Ուզուն-Ադայից գնում է 6 ժ. 40 ր. եր
Ուզուն-Ադա գալիս է 7 ժ. 48 ր. առ.
Ուզուն-Ադայից գնացքը գնում է և գալիս երեքշաբթի և չարաթ օրերը։
Սամարղանդ գնացքը գալիս է և գնում է ուրբաթ և երեքշաբթի օրերը։
I Ռոստով-Վլադիկաւկազի երկաթ.
Վլադիկաւկազից գնում է 9 ժ. 30 ր. առ
Ռոստով գալիս է 8 ժ. 48 ր. առ
Ռոստովից գնում է 7 ժ. 28 ր. ցեր.

ԾԱՆՈՒՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՋՐԱՇԵՆԻ-ԱԻԵՏԵԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԿԻՐԱԿԵԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՄ երկու սեռի աշակերտների ընդունելութիւն կը լինի քննութեամբ և առանց քննութեան օգոստոսի 24-ից մինչև 28-ը։
(156) 3—1.

KAKAO
БЕЗЪ МАСЛА
ВЫСШАГО КАЧЕСТВА
МИНУТНОЕ
ПРИГОТОВЛЕНІЕ
ФАБРИКИ
C.CIУиK
36—26

ԿԱԹՈՒՂԻԿԷ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ (Ս. ԳԷՈՐԳ) ԵԿԵՂԵՑՈՒ ՏՂԱՑՈՑ ԾԽԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ նորեկաշակերտների ընդունելութիւնը սկսւում է 0գոստոսի 26-ից, իսկ քննութիւններն ու վերաքննութիւնները 29 ից։ Նորեկ աշակերտները պէտք է ներկայացնեն ծննդեան և ծաղկի վկայականները։
Աւագ-ուսուցիչ՝ Գ. Կուզանեանց։
(157) 2—1.

ԹԻՓԼԻՍԻ ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԿԱՐՈՒԶԵԻ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ընդունելութիւնները կսկսուեն օգոստոսի 25-ից։ Ամեն խնդրատու պարտական է ներկայացնել իւր ծննդեան, ծաղկի և ուսման վկայականները։
Սերգէեվսկայա փողոց, թիւ 19։
(191) 2—2

ՍՈՒԲԲ ՆՇԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕՐԻՈՐԴԱՑ ՄԻՊԱՍԵԱՆ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ աշակերտուհիների ընդունելութիւնները կսկսուեն օգոստոսի 25-ից։ Իւրաքանչիւր աշակերտուհի պէտք է ներկայացնէ իւր ծննդեան և ծաղկի վկայականները։
(191) 2—2

Ա. ՓՐԻԴՈՆԵԱՆ ԵԻ ԸՆԿ.
ԲԱՆԿԱՅԻՆ ԳՐԱՍԵՆԵԱԿԸ
Ընդհանրեցնում է I և II փոխառութեան խաղարկութեան տոմսերը իւրաքանչիւրը 75 կոպ.
(195) 3—1.

Ա. ՌԱԼԼԷ ԵԻ ԸԿ.
ՄՈ ՍԿՈՒԱՑՈՒՄ
ԱՐՔՈՒՆԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՆԵՐ։
Ա. ՌԱԼԼԷ ԵԻ ԸՆԿ.
գործարանում յատկապէս պատրաստուած և հրատարակած
ԹԱՒՇԵԱՅ ՊՈՒԴՐ
ԳԼԻՑԵՐԻՆԻ ՅԱՂԿԱՀԱՏՈՑ ՍԱՊՈՒՆ
ԶՈՒԻ ՍԱՊՈՆ
Ծաղիկների վրայ գոած Օ-դ-ը-կոլոն
Վաճառւում են Ռուսաց կայսրութեան բոլոր քաղաքներում։ Պրէյս-կուրանտն ուղարկւում է ձրի։
(M.) 5—4.

ԱՒԵՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Երկու սեռի անձանց համար
ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողներն ստանում են ատեստատներ։
Աւանդելի առարկաները սրանք են՝ 1) Առևտրականներ ետութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն հմտրէյի վրայ, 5 Առևտրական Թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնագրութիւն, և 7) գեղագրութիւն։
Ուսումն սկսւելու է սեպտեմբերի 16-ից։ Ընդունելութիւնները սեպտեմբերի 2-ից ամենայն օր երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում Սօլօլակում Նագորնայա փողոցի վրայ, Ալէքսանդր Փրիդոնովի տանը №9, դեղատան դիմաց։ Ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ԶՐԻԱՊԻՍ եղբ. Ծովիանովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմողի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ. С. П. Мануэльянцу
(182) 25—15

Дозволено цензурою. Тифлисъ, 16-го Августа 1891 г. Տպարան Կաւկազ լրագրի գրասենեակի Типографія конторы газеты Кавказъ, Гол. пр, д. Читахова